

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

Մեր քաջարի զինուորութեան—գերապատիւ առաջնորդներին, վարդապետներին և համայն քահանայից դասին, բանիմաց մտաւորականներին, քաղաքացիներին, ժրաջան բանուորներին, գիւղականներին և արհեստաւորներին և առհասարակ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներին ամէն սեռի և հասակի, մեծերին և փոքրերին Մայր Աթոռիս հարազատներին, հայրապետական ողջոյն և օրհնութիւն:

Աշխարհասասան պատերազմի ընթացքում մեծամեծ զոհեր տուիր դու, հայ ժողովուրդ, հարիւր հազարները քեզնից բնաւեր եղան և հարիւր հազարաւորներ, ժողովուրդ և հոգևորականութիւն, իրենց անմեղ արեամբ ներկեցին հայրենի երկրի քար ու հողը: Լաւագոյն զաւակներդ տարագրուեցան և սրախողխող եղան և հայրենիքի ազատութեան տենչը վերջին շնչի հետ քեզ աւանդեցին, նոքա գերեզմանի իսկ չարժանացան, քանի որ քո գեղեցիկ հայրենիքը ինքնին մի մեծ գերեզմանոց է, ուր դեռ սաւառնում են հայրենի երկնակամարում նահատակուածների անմահ հոգիները:

Նոքա սպասում են Քեզ, սպասում են, որ գնաք և հանգիստ տաք նոցա ոսկորներին, որպէսզի նոցա տանջուած հոգիները խաղաղութիւն գտնեն յաւիտենականութեան գրկում:

Մեր բիւրաւոր նահատակները մեռան հրի և սրի տակ, բայց բոլորն էլ շնչերն աւանդեցին մի գաղափարի յոյսով տոգորուած—հայրենիքի ազատութեան գաղափարի: Չկար նոցա մէջ ոչ հրեայ և ոչ հեթանոս, բոլորը մեկ էին, մի հոգի և մի շունչ, մի գաղափարի շուրջը միացած և՛ ի կենդանութեան և՛ բարբարոս սրի հարուածների տակ շունչները փչելիս:

Մենք որ ապրել և ապրում ենք հայրենիքի միութեան և ազատութեան յոյսով, այսօր, հայ կեանքի վերածնութեան գարնան արշալոյսի առկայծման օրերին վշտով տեսնում ենք, թէ ինչպէս մոռացել ենք մի ընդհանուր լեզուն և նպատակը, հայ կեանքի շարժող արիւնի տակ, տեսնում ենք, թէ ինչպէս անյայտ, անորոշ, մշուշապատ գաղափարներով տարուած մարդիկ փոսեր են փորում: Միացեալ և անկախ հայրենիքին ծանր վտանգներ սպառնացող այս օրերում փոխանակ մի ընդհանուր գործի շուրջը համախմբուելու, մարդիկ անհատական և խմբական ջլատիչ գործողութիւնների են դիմում, հայրենի նաւը անխարդախ նաւահանգիստ հասցնելու ծանր աշխատանքների այս դառն օրերում:

Հայ ժողովուրդ, հայ մտաւորական, հայ մշակ և գիւղացի, հայ արհեստաւոր և քաղաքացի, զգաստացիր, միութիւնն ու համագործակցութիւնը քեզ ճամփայ ընտրիր, համախմբուիր օրինաստեղծման քո կառավարութեան, Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան շուրջը: Զգաստ եղիր քո գիտակցութեամբ և քո քայլերիդ հաստատութեան մէջ, չափաւոր եղիր քո պահանջների հանդէպ, և կառավարութեան հետ քո միութեամբդ ձգտիր հասնել այն օրին, երբ դու քո ջանքերով տէր կը դառնաս քո հայրենի հողին ու ջրին, քո ամբողջական հայրենիքին: Ոչ թէ միայն յոյսով ապրիր, այլ և աշխատանքով հասիր այդ օրին, քո ձեռքով քու բախտն ու վիճակը տնօրինելու օրին:

Նոքա, որոնք վտանգ չեն տեսնում արևելքից և արևմուտքից, նոքա, որոնք չտեսնողս են ձևանում, որ մեր տան մէջ մեր դէմ դաւեր են լարում պայթեցնելու անկախ Հայաստանի գաղափարը, նոքա, որոնք չեն տեսնում հայաջինջ ծրագիրների քայլ առ քայլ և հետևողական իրագործումը, զգո՞ւմ են, թէ ի՞նչ պատասխանատուութիւն է ծանրանում նոցա հանդէպ պատմութեան առաջ: Այս դրպէիս, երբ ամենքիս պարտականութիւնն է համախմբուել ոչ միայն հայրենիքի պահպանութեան և վերաշինութեան գործի շուրջը, այլ նամանաւանդ հայ ժողովրդի ֆիզիկական գոյութիւնը պահպանելու դժուարին աշխատանքի շուրջը, ցաւալի է տեսնել ներքին երկպառակութիւններ:

Մենք, ինչպէս և մեր երջանկայիշատակ նախնիքները, որ աշխատանք են թափել տաճկահայ դատի համար, լաւ օրերի յոյսի ակնկալութեամբ, չենք կարող տարբեր մնալ այս նեղ դրպէներին, և երբ վտանգուած ենք տեսնում հայրենիքի միութեան գործը, բայց նամանաւանդ հայ ազգի ֆիզիկական գոյութեան ճշնաժամային գործը, իբր ընդհանրական Հայրապետ մեր սրբազան պարտքն ենք համարում այս ծանր, կ՚ասենք օրհասական դրպէներին հայրական խրատով դիմել բոլորին և զգաստութեան կոչ անել —Հայ ժողովուրդ, համախմբուիր քո հայրենի հանրապետութեան պահպանութեան գործի շուրջը. դա է քո հայրենիքի փրկութեան միակ ճանապարհը:

Մենք հաւատում ենք հայ ժողովրդի իմաստութեանը և առողջ բնազդին:

Մենք հաւատում ենք, որ հայրենիքի միութեան, ազատութեան և շինութեան ճամփի վրա առաջ եկած արգելքներն ու դժուարութիւնները կը վերանան, բորբոքուած մտքերը կը խաղաղուեն և ամէնքը մի խօսք և մի հոգի կը դառնան ընդհանուր գործի ճամփին: Վտանգը և խիստ ծանր վտանգը ձեր դռանն է, հայ ժողովուրդ, զգուշ եղիր և պատմութեան առաջ ծանր պատասխանատուութեան բեռի տակ մի ընկնիր: Ամէն:

ԳԷՈՐԳ Ե
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 14 Մայիսի 1920 ամի
Եւ ըստ Տոմարիս ՌՑԿԹ
Ի Հայրապետութեան Մերոյ Թ ամի
ՅԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
Ի Վաղարշապատ

Թ. 276

ՀԽԱՀ ՊԿՊԱ, Հիմք՝ ֆոնդ 57, ցուցակ 5, գործ 94: